

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուսումնառության պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) կնքում են ՀՀ ԿԳՆ (այսուհետ՝ Նախարարություն) Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ **Կրթահամալիր**) (այսուհետ՝ **Դպրոց**), ի դեմս տնօրեն (այսուհետ՝ **Տնօրեն**), ով գործում է կանոնադրության համաձայն,-րդ դասարանի սովորողը (այսուհետ՝ **Սովորող**) և նրա օրինական ներկայացուցիչը(այսուհետ՝ **Օրինական ներկայացուցիչ**), որպես Սովորողի կրթության պատասխանատուներ (այսուհետ՝ **Կողմեր**), Սովորողի կրթությունը Կրթահամալիրում, Դպրոցում և տանը կազմակերպելու համար: Պայմանագիրը նախատեսված է Հանրակրթության մասին ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), Կրթահամալիրի կանոնադրությամբ, **Դպրոցի** կանոնադրությամբ, ուսումնական պլանով և կազմված է Նախարարի 26.12.2009թ. N 1105-Ն հրամանով հաստատված օրինակելի պայմանագրի հիման վրա:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

1. Օրենքով սահմանված կարգով Կրթահամալիրում իրականացվում է «**Ստեղծողի մոբիլ դպրոց**» հեղինակային կրթական ծրագիր (այսուհետ՝ **Ծրագիր**): Ծրագիրն ապահովում է համընդհանուր ներառական կրթություն՝ որպես սովորողի կրթության իրավունքի ապահովում: Կրթության ներառականությունն ուղղված է Սովորողի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: Ծրագիրն ուղղված է նաև ստեղծագործական աշխատանքի խթանմանը, Սովորողի վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, ինքնակրթության, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացմանը:
2. Սովորողը կրթահամալիրում սահմանված կարգով ընդունում է ուսուցման **հեռավար ձևը**:
3. Դպրոցը սովորողի ընտրած ձևով իրականացնում է.
 - ա) անվճար հանրակրթություն՝ պետական չափորոշչով,
 - բ) կրթական ծրագրի ուսումնական պլանով և սովորողի անհատական ուսումնական պլանով որոշված լրացուցիչ (վճարովի) կրթական ծառայություններ (այսուհետ՝ լրացուցիչ ծառայություն), որոնք են.
 - ուսուցման կազմակերպում անհատական թվային միջոցով
 - ուսուցման մեջ, այդ թվում՝ լրացուցիչ կրթության, կայքերի, դասավանդողների և սովորողի անհատական և խմբային ուսումնական բլոգների, էլեկտրոնային օրացույց-օրագրերի, էլեկտրոնային փոստերի գործածում.
 - Դպրոցի գրասենյակում, ուսումնական կաբինետներում, լաբորատորիաներում, ընթերցարանում դասավանդողների համար ինտերնետային կապի և թվային միջոցների ապահովում.
 - Դասավանդողի, խորհրդատուի, սովորողների խմբի հետ տեսահանդիպումների կազմակերպում՝ սահմանված կարգով.
 - Սովորողի սպասարկում որպես մեդիագրադարանի բաժանորդի.
 - Դպրոցի գրասենյակի միջոցով սովորողին ուղարկված առաջադրանքների, նախագծերի գրանցում՝ սահմանված կարգի համաձայն.
 - Սովորողի ուսումնական պլանով, Կրթահամալիրի ուսումնական օրացույցով նախատեսված ֆլեշմոբների, ստուգատեսների, փառատոների, նախագծերի, տոների, ուսումնական ճամբարների կազմակերպում.
 - Սովորողի ուսումնական գործունեության, այդ թվում՝ լրացուցիչ կրթության, մասին ամբողջական ամենօրյա տեղեկատվություն համացանցի միջոցով.
 - ուսումնական նյութական և մեդիա միջավայրի բարելավում և համապատասխանեցում հեղինակային կրթական ծրագրի, կրթության անհատականացման, ներառող լինելու պահանջներին.
 - գ) սահմանված կարգով՝ լրացուցիչ այլ կրթական վճարովի ծառայություններ:

2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ուսուցումը կազմակերպվում է դպրոցի ուսումնական պլանին համապատասխան, Սովորողի՝ սահմանված կարգով հաստատվող տարեկան ուսումնական պլանի (Պայմանագրի հավելված), կրթահամալիրի ուսումնական օրացույցի հիման վրա:
2. Սովորողի ընդունելությունը Դպրոց իրականացնում է Տնօրենը՝ Սովորողի, Օրինական ներկայացուցչի բանավոր դիմումի և Պայմանագրի հիման վրա, սահմանված կարգով, տեղեկացված սովորողի ազատ ընտրությամբ: Օրինական ներկայացուցիչը Դպրոց է ներկայացնում Օրենքով սահմանված փաստաթղթեր, որոնց հիման վրա սահմանված կարգով վարվում է Սովորողի էլեկտրոնային անձնական գործը:
3. Սովորողը հաշվառվում է դպրոցի համապատասխան դասարանում:

4. Սովորողի անհատական պլանով որոշված դասընթացների դասավանդողների, խորհրդատուների ցուցակը պայմանագրի հավելվածն է:
5. Ուսուցումը կազմակերպվում է դասավանդողի ուսումնական բլոգում տեղադրված ծրագրի, ուսումնական նյութերի, առաջադրանքների, նախագծերի միջոցով:
6. Սովորողը առաջադրանքը, նախագիծը կատարում է սահմանված ժամանակահատվածում՝ իրեն հարմար տեղում և ժամանակ, և տեղադրում իր ուսումնական բլոգի համապատասխան բաժնում:
7. 3-րդ դասարանի վերջում սահմանված կարգով կազմակերպվում է Սովորողի ուսումնական գործունեության արդյունքների ուսումնասիրություն: 4-րդ դասարանի վերջում Նախարարության սահմանած կարգով անցկացվում են ստուգումներ: 9-րդ դասարանի վերջում Նախարարության սահմանած կարգով անցկացվում են պետական ավարտական քննություններ: Ընթացիկ, ամփոփիչ ստուգումներն իրականացվում են Ծրագրով նախատեսված ժամկետներում և սահմանված կարգով: 12-րդ դասարանում սովորողը հանձնում է պետական ավարտական քննություններ՝ ՀՀ ԿԳՆ սահմանած կարգով:
8. Ջանքեր չցուցաբերող սովորողի Պայմանագիրը սահմանված կարգով լուծվում է:
9. Սովորողը սահմանված կարգով ընդգրկվում է լրացուցիչ կրթության պարապմունքներում:
10. Կանոնները չպահպանելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Օրենքով և սահմանված կարգով սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ ա) նկատողություն, բ) խիստ նկատողություն:
11. Դպրոցը կարող է միակողմանի, տասն օր առաջ տեղյակ պահելով Սովորողին և Օրինական ներկայացուցչին, սահմանված կարգով լուծել Պայմանագիրը, եթե Սովորողը, Օրինական ներկայացուցիչը չեն պահպանել պայմանագրային դրույթները, կամ Սովորողը չի ապահովել կրթության բովանդակությանն ու ծավալի յուրացմանը ներկայացվող նվազագույն պահանջները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ

1. Օրինական ներկայացուցիչը պարտավորվում է.
 - նշված լրացուցիչ կրթական ծառայությունների համար մեկ ուստարում վճարել () ՀՀ դրամ. առաջին մուծումը՝ առնվազն () ՀՀ դրամը, կատարվում է պայմանագրի կնքման պահին.
 - Պայմանագրով որոշված վճարումները սահմանված կարգով անել փոխանցումով՝ Կրթահամալիրի հաշվարկային հաշվին. կիսամյակային՝ սեպտեմբերին և հունվարին:
2. Ոչ լրիվ ուսումնական տարվա դեպքում ստացած կրթական ծառայությունների վճարը հաշվարկվում է ամիսը () ՀՀ դրամ:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, օրենսդրությամբ, Կրթահամալիրի կանոնադրությամբ, կրթահամալիրի ներքին կարգապահական կանոններով (այսուհետ՝ Կանոններ), Դպրոցի կանոնադրությամբ, Պայմանագրով:

1. Տնօրենը պարտավոր է՝
 - 1) Մինչև Պայմանագրի կնքումը Սովորողին և Օրինական ներկայացուցչին ծանոթացնել առաջարկվող Պայմանագրին, տրամադրել կրթահամալիրի կանոնադրության, Դպրոցի կանոնադրության, Կանոնների, Ծրագրի, Կարգերի էլեկտրոնային տարբերակները (տես mskh.am-ում).
 - 2) Ուսուցումը հեռավար ձևով կազմակերպել Ծրագրի պահանջներին համապատասխան Սովորողի համար ապահովելով Ծրագրով սահմանված գիտելիքների, կարողությունների, արժեքների ընդհանրական որակական մակարդակը.
 - 3) հարգանքով վերաբերվել Սովորողի իրավունքներին ու ազատություններին՝ միաժամանակ կարևորելով քաղաքացիական գիտակցության, հանրակրթության բնագավառում ժողովրդավարական սկզբունքների և կրթության աշխարհիկ բնույթի ապահովումը և կիրարկումը.

Տնօրենի իրավունքները որոշված են Դպրոցի կանոնադրությամբ, Կանոններով, Կարգերով, ղեկավարի պաշտոնի նկարագրով:

2. Օրինական ներկայացուցիչը պարտավոր է՝
 - 1) Սովորողին ապահովել ուսումնական անհատական թվային միջոցներով, ուսումնառության համար անհրաժեշտ գրքերով, անհատական ուսումնական, այդ թվում՝ նաև մարզական, ճամփորդական միջոցներով, համացանցով.
 - 2) ունենալ էլեկտրոնային հասցե և պատասխանել դասավանդողի, կազմակերպչի, Տնօրենի, գրասենյակի ղեկավարի, Կրթահամալիրի տնօրենի էլեկտրոնային նամակներին, հետևել կրթահամալիրի, Դպրոցի

կայքերին, սովորողի, դասարանի բլոգներին. կոնտակտային հեռախոսահամարի, էլեկտրոնային հասցեի փոփոխության դեպքում տեղեկացնել գրասենյակի ղեկավարին.

- 3) Ապահովել սովորողի կենսական պայմանները, անվտանգությունը.
 - 4) Ապահովել սովորողի ուսումնական պլանով որոշված, ինքնակրթության միջոցով իրականացվող պարապմունքները.
 - 5) Սովորողի դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերն ընտանիքում լուծել փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով Սովորողի շահերից, օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվի առնելով նրա կարծիքը, ներկայացուցչական իրավունքները չիրականացնել Սովորողի շահերին հակառակ, հարգել սովորողի՝ Պայմանագրով որոշված պարտականությունները.
 - 6) Սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ, թմրեցնող նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ պարագաներ, առարկաներ օգտագործելուց, իրագործել մուրացկանությունից, թափառաշրջիկությունից, մոլախաղերից և այլ բնույթի քրեածին, հանցավոր արարքներից հետ պահող գործողություններ.
3. Օրինական ներկայացուցիչն իրավունք ունի.
- 1) համագործակցելու Դպրոցի, մանկավարժական աշխատողների հետ.
 - 2) Սովորողի ուսուցման և դաստիարակության հարցերով դիմելու Կրթահամալիրի տնօրենին, խորհրդին, համապատասխան այլ մարմինների.
 - 3) պաշտպանելու իր և Սովորողի օրինական շահերը Կրթահամալիրի խորհրդում, մասնաժողովում, Դպրոցի հավաքներում, քննարկումներում, համապատասխան այլ առյուծակներում.
 - 4) մասնակցելու Կրթահամալիրի, Դպրոցի կառավարման, Ծնողական ինքնավարության մարմինների, Կրթահամալիրում իրականացվող՝ մեծահասակների կրթության ծրագրերին, Կրթահամալիրի օրացույցով անցկացվող ստեղծագործական հավաքներին, ներքին գնահատման գործընթացներին, առցանց քննարկումներին.
 - 5) ներդրումներ կատարելու Կրթահամալիրի զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքներում, այդ թվում՝ ուսումնա-հայրենագիտական աշխատանք, ուսումնական ճամփորդություն, ստեղծագործական, հայրենագիտական, էկոլոգիական ճամբարներ, սովորողների տրանսպորտային փոխադրման կազմակերպում:
4. Սովորողն իրավունք ունի.
- 1) սահմանված կարգով ընտրելու ուսումնական պլանով որոշված իր նախասիրած գործունեությունը (ընտրությամբ գործունեության ծրագիրը), լրացուցիչ կրթության ծավալը.
 - 2) սահմանված կարգով ընտրելու մարզաձևը և զբաղվելու դրանով
 - 3) սահմանված կարգով մասնակցելու կրթահամալիրում գործող ակումբների աշխատանքներին
 - 4) հարցեր ուղղելու դասավանդողներին, խորհրդատուներին, դասընկերներին, Տնօրենին, Կրթահամալիրի տնօրենին, խորհրդին, մասնաժողովին.
 - 5) մասնակցելու առցանց քննարկումներին,
 - 6) ուսումնական նախագծեր առաջարկելու և իրականացնելու.
 - 7) հայց ներկայացնելու Կրթահամալիրի խաղարկային դատարան:
5. Սովորողը պարտավոր է.
- 1) չխախտել Կանոնները, ուսումնառության ընթացքում հարգել այլոց իրավունքները.
 - 2) պահպանել անվտանգության կանոնները.
 - 3) ժամանակին կատարել և հրապարակել ուսումնական առաջադրանքները, նախագծերը.
 - 4) ուսումնական բլոգում ներկայացնել ինքնակրթության պարապմունքները, արդյունքները.
 - 5) ուսումնական բլոգում ներկայացնել կատարած ճամփորդությունները, մասնակցած ճամբարները.
 - 6) սահմանված կարգով մասնակցել ուսումնական պլանով որոշված ճամբարներին, ստուգատեսներին, ծեսերին, տոներին
 - 7) սահմանված կարգով նախագծել և իրականացնել ուսումնա-հասարակական նախագծեր, մասնակցել այլոց նախաձեռնություններին.
 - 8) վարել իր ուսումնական բլոգը.
 - 9) հետևել կայքին, դասավանդողների ուսումնական բլոգներին և սահմանված կարգով մասնակցել կայքի աշխատանքներին.
 - 10) վարել էլեկտրոնային հասցե, պատասխանել դասավանդողի, խորհրդատուի, Դպրոցի կազմակերպչի, Տնօրենի, գրասենյակի ղեկավարի, Կրթահամալիրի տնօրենի էլեկտրոնային նամակներին.
 - 11) մասնակցել կազմակերպվող տեսահանդիպումներին.
 - 12) սահմանված կարգով ներկայացնել ուսումնական գործունեության հաշվետվությունները:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Պայմանագիրը լուծվում, կամ գործողությունը դադարում է սահմանված կարգով.

- 1) Օրինական ներկայացուցչի և Սովորողի նախաձեռնությամբ.
- 2) Դպրոցի նախաձեռնությամբ.
- 3) եթե Դպրոցը լուծարվել կամ վերակազմակերպվել է.
- 4) եթե Սովորողի նկատմամբ օրինական ուժի մեջ է մտել դատարանի դատավճիռը.
- 5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- 1) Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև 2018թ. հունիսի 30-ը: Կողմերի նախաձեռնությամբ անհրաժեշտ փոփոխությունները կատարվում են հավելվածի տեսքով:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Կողմերի տարաձայնությունները լուծվում են Կանոններով սահմանված կարգով, փոխադարձ համաձայնությամբ:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն: Պայմանագրի էլեկտրոնային օրինակը հավասարազոր իրավաբանական ուժ ունի:
2. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո Պայմանագրի օրինակը սահմանված կարգով Դպրոցում պահպանվում է հինգ տարի:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

Օրինական ներկայացուցիչ՝

Հանրակրթության իրականացող

Անձնագիր՝
 Անուն՝
 Ազգանուն՝
 Ստորագրություն՝
 Հասցե՝
 Հեռախոս՝
 Էլ.հասցե՝

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի
 դպրոց
 Տնօրեն՝
 Ստորագրություն՝
 Հասցե՝
 Հեռախոս՝
 Էլ. հասցե՝

Բանկային հաշվի համարը՝ Հայէկոնոմբանկ
Մետաքս մասնաճյուղ հ/հ 163218137665

Սովորող

Պայմանագիրը լուծվել է հետևյալ պատճառով. _____
 Օրինական ներկայացուցիչ՝ _____
 Դպրոցի ղեկավար՝ _____
 Սովորող՝ _____